

Ա. Մուրվալյան

ՀԱՅՈՑ ԼԵՋՎԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Լեզվի զարգացումը կատարվել է նրա կառուցվածքի հիմնական տարրերի աստիճանական ծավալման ու կատարելագործման, ճշտման ու կանոնավորման միջոցով: Լեզվի մի որակից մի այլ որակի անցնելը տեղի է ունեցել ոչ թե պայթուչի միջոցով, այն է՝ նրա միանգամայն ոչընչացման և նորի կառուցման միջոցով, այլ այդ անցումը կատարվել է լեզվի նոր որակի, նոր կառուցվածքի տարրերի աստիճանական ու տեղական կուտակման և հին որակի տարրերի աստիճանական մահացման միջոցով:

Հայոց լեզվի հիմնական բառապաշարը, օրինակ, ինչպես հայտնի է, վավերացված է հնագույն արձանագրություններում և ձեռագրերում, համեմայնդեպս, հինգերորդ դարից (մեր թվարկության):

Այնպիսի բառեր, ինչպիսիք են՝ մայր, հայր, քույր, եղբայր, դուստր, զուլիս, աչք, սիրտ, ձեռք (ձեռն), բերան, գործ... տուն, դուռ (դուռն), բախ, սաք, ծառ, քար, հող, դաշտ, ձոր, հովիտ, գետ... մեկ, երկու, երեք, չորս, ընկզ... տասը (տասն)... քսան... հարյուր... ով, ինչ, ես, դու, նա, այստեղ... լինել, նստել, կանգնել, սիրել, ունենալ, շինել... և ուրիշ շատ բառեր, գործ են ածվել նաև սրանից հաղար հինգ հարյուր տարի առաջ հայոց խոսակցական լեզվում (կամ հենց այսպես, կամ էլ ձևա-իմաստային բոլորովին չնչին տարրերով յամբ), ծառայել են հայ ժողովրդի առնվազն քսան-քսան հինգ սերունդներին: Նման բառերը մեր ամենահին նախնիների ձեռք բերած և այսօր էլ անհրաժեշտ, առօրյա գործածական բառեր են...

Որ ասում ենք՝ հաղար հինգ հարյուր տարի առաջ, մենք նկատի ունենք վառարարական լեզվաբանական ձևերի փոփոխությունները. անկասկած, այս և նման շատ ուրիշ բառեր անհամեմատ ավելի շուտ են գոյություն ունեցել հայոց լեզվում, պատմական շրջանում, հայ ժողովրդի կազմավորման ժամանակից, մի մասը գալով գեոնես, այսպես կոչված, նախապատմական շրջանից:

Նախապատմական շրջանից եկող բառերից է, օրինակ, հ. սայր բառը, որ, ինչպես հայտնի է, կապվում է հ. սլ. mati (=ռուս. мать)=սանսկ. matar, իրան. matar, հուն. meter, լատ. mater, լիթ. motyna, հ. գերմ. muoter, հ. իռլ. mathir և այլ ձևերի հետ: Կամ թե չէ՝ հ. եղբայր բառը կապվում է հ. սլ. bratrū, bratu (=ռուս. брат)=սանսկ. bhratar, իրան. hratar, հուն. phrater, լատ. frater, լիթ. brater, գոթ. brōðar (=գերմ. bruder) և այլ ձևերի հետ: Ինչպես նաև՝ *բայր>*ղայր>*ղրայր>եղբայր, որի բարբառային ձևերն են՝ ախպար || ախպեր, ինչպես նաև՝ ապեր, ապի, ափար, ափեր, ափի, ափո, որոնք նախնական լեզուներից են:

նույնիսկ անցել են «մեծ եղբայր, հայր, հորեղբայր» նշանակության և վերջապես դարձել են մեծերին տալու պատվանուն։ Նման բառերն են նաև՝ հայր, քույր, որդի, դուստր և այլն։ Սրանք նախապատմական շրջանից անցնելով հայոց լեզվի պատմական շրջանի բառային կազմի և նրա բառային հիմնական ֆոնդի մեջ և ստանալով հայերենին հատուկ ձևավորում՝ մինչև օրս էլ պահպանված են հայոց լեզվում, որպես առօրյա գործածական բառեր։

Այս կարգի բառերն իրենց ծագման ու վաղեմության տեսակետից տարբերվում են հայոց լեզվի զարգացման պատմական տարրեր շրջաններում առաջ եկած, նրա բառային կազմն ու բառային հիմնական ֆոնդը համալրող, տարրեր լեզուներից յուրացված բազմաթիվ բառերից ու բառարմատներից, հենց թեկուզ իրանական լեզուներից յուրացված այնպիսի բառերից, ինչպիսիք են՝ հյ. բամբակ, բրինձ, գանձ, գրավ, դմակ, դրոշակ, զմրուխտ, ժանգ, լեղակ, կանեփ, նավթ, նշան, շաքար, պատիվ, պողպատ, պղինձ, փիղ, փող, քանդակ... և այլն։

Հայոց լեզվի բառային հիմնական ֆոնդը պահպանվելով մի շարք դարաշրջանների ընթացքում՝ միաժամանակ իր զարգացումն ու համալրումն է ապրել նոր որակի տարրերի աստիճանական կուտակման ու ծավալման և հին որակի տարրերի աստիճանական մահացման միջոցով։

Իր զարգացումն է ապրել նմանապես դարաշրջանների ընթացքում մշակված և լեզվի մեջ միս ու արյուն դարձած հայոց լեզվի քերականական կառուցվածքը, բայց փոփոխվել է համեմատաբար ավելի դանդաղ, քան բառային հիմնական ֆոնդը։ Այդ զարգացումը դրսևորվել է հատկապես քերականական կառուցվածքի կատարելագործումով, բարելավումով, կանոնների ճշգրտումով և հարստացումով նորանոր կանոններով։

Նման փոփոխությունների զարերի պատմություն ունեն, որոնք դրսևորվել են հայոց լեզվի զարգացման տարրեր փուլերում, արտահայտվելով ինչպես քերականական կառուցվածքի, այնպես էլ նրա բառային հիմնական ֆոնդի մեջ։

Չենք խոսում, իհարկե, հայոց լեզվի բառային կազմի մասին, որ առավել զգայուն է հասարակական կյանքում կատարված փոփոխությունների նկատմամբ։ Բառային կազմն է, որ որոշում է լեզվի հարստությունը և թեև առանց դրան աներևակայելի է որևէ լեզու, բայց նա չի կազմում բուն լեզուն։ Բառային կազմը որպես անհրաժեշտ շինանյութ (լեզվանյութ) դրվում է քերականության տրամադրության տակ, որ որոշում է բառերի փոփոխության կանոնները, նախադասության մեջ բառերի կապակցության կանոնները և այդպիսով լեզվին տալիս է կուռ, իմաստավորված բնույթ։

Քերականությունը, որի շնորհիվ լեզուն հնարավորություն է ստանում մարդկային մտքերը պարուրելու լեզվական նյութական թաղանթով, ընդգրկում է ձևաբանությունն ու շարահյուսությունը, որպես քերականության երկու հիմնական բաժիններ։ Իրանցից յուրաքանչյուրը լեզվի ուսումնասիրության մեջ ունի իր ուրույն բնագավառը։ Այսպես, օրինակ, ձևաբանությունն ուսումնասիրում է բառերի փոփոխության կանոնները (բառահարբերությունները՝ հոլովումն ու խոնարհումը, նոր բառերի կազմությունը և միջոցները, ձևաբանական կառուցորիաները), իսկ շարահյուսությունն ուսումնասիրում է նախադասության մեջ այդ բառերի կապակ-

քոթյան կանոնները (բառերի շարահասությունը, համաձայնությունը և այլն)։

Այս տեսակետից էլ հայոց լեզվի քերականական կառուցվածքի կատարելագործման ու բարելավման, կանոնների ճշգրտման և նորանոր կանոններով հարստացման տարրեր երևույթներ կարելի է դիտել հայոց լեզվի դարգացման տարրեր փուլերում։ Սակայն, ինչպես բառային հիմնական ֆոնդի, այնպես էլ քերականական կառուցվածքի տարրերի մեջ կա, եթե կարելի է ասել, մի կորիզ, որ դարաշրջանների պատմություն ունի, գալով ոչ միայն պատմական, այլև նախապատմական շրջանից (իհարկե ձևափոխության որոշ փոփոխություններով)։

Այսպես, օրինակ, հայերենի ներկա բայերների վրա ավելացած վերջածանցները (դեմքի նշանները), ինչպես գրաբարում՝ եզ. գնա-մ գնա-ս, գնա-յ (նոր՝ գնա, -յ դեմքի նշանի անկումով), հոգն. գնա-մք (նոր՝ գնա-նք), գնա-յք (նոր՝ գնա-ք), գնա-ն արտահայտել են ու արտահայտում են բայերի դեմքեր՝ ենթակայի հետ համաձայնելով։ Այսպես նաև՝ սիրել բայաձևից՝ եզ. սիրե-մ, սիրե-ս, սիր-է (<*սիրե-յ, նոր՝ սիրի), հոգն. սիրե-մք (նոր՝ սիրե-նք), սիրէք (<*սիրե-յք, նոր՝ սիրեք), սիրե-ն ձևերի մեջ, կամ թե չէ՝ եզ. եմ, ես, է (<*եյ), հոգն. եմք (նոր՝ ենք), էք (<*եյք), եմ ներկա էական կամ օժանդակ բայերի մեջ արտահայտված են նույն դեմքի նշանները։ Մյուս կողմից ոչ միայն գործ ենածվել հայոց լեզվի գրավոր շրջանում (գրաբարում, միջին հայերենում և արդի հայերենում), այլև նախագրավոր շրջանում՝ գալով նախապատմական շրջանից՝ ձևափոխության որոշ փոփոխությամբ և կապվելով հնի. es (լինել, գոյություն ունենալ) արմատի հետ, որի ներկա եղակի երեք դեմքերն էին ésmi «եմ», essi «ես», esti «է» (ազգակից լեզուներից հմմտ. առաջին դեմքի համար՝ հ. սլ. jesmi=սանսկ. asmi, գենդ. ahmi, հ. պրսկ. amiy, պրսկ. am, հուն. εἶμι, լատ. sum, հ. իսլ. em, հ. իռլ. am, գոթ. im, անգլ. am, լիթ. esmi... երկրորդ դեմքի համար՝ հ. սլ. jesi=սանսկ. asi, լատ. ess, es, լիթ. esi, հ. պրուս. assai, գենդ. ahi... երրորդ դեմքի համար՝ հ. սլ. jesti=սանսկ. asti, գենդ. asti, հուն. ἔσται պհլ. — պրսկ. ast, լատ. est, գոթ. — գերմ. ist և այլն)։ Այս էական կամ օժանդակ բայը ընդհանուր է ոչ միայն գրաբարում, միջին հայերենում և արդի հայերենում, այլև հայոց բոլոր բարբառներում՝ հնչյունական որոշ փոփոխությամբ, այսպես՝ առաջին դեմքի համար՝ էմ, ըմ, իմ, ամ «եմ», երկրորդ դեմքի համար՝ էս, ըս, իս, աս «ես» և երրորդ դեմքի համար՝ է, ը, ի, ա «է» ձևերով։ Հայ պետականության գոյության ընթացքում դեռևս հայ բարբառները չէին միավորվել (միաձուլվել) հայոց ընդհանուր լեզվին (գրաբարին)։ Հայ պետականության վերացումից հետո արդեն ոչ թե միավորման միտումը, որ առկա էր նախքան այդ, այլ, ընդհակառակը, ուժեղացավ այդ բարբառների անջատման ու հեռացման միտումը։ Այսպիսով, հայ խոսակցական լեզուն (աշխարհաբարը) այնպես տարբերվեց հին գրական լեզվից (գրաբարից), որ գրաբարը կամ հին գրավոր լեզուն միջին դարերում արդեն լիովին հասկանալի չէր հայ ժողովրդին։ Բայց, այնուամենայնիվ, հայ ժողովրդի խոսակցական լեզուն (աշխարհաբարը), որ հիմք հանդիսացավ հայոց նոր գրական լեզվին, հանդման ու ընդհանուր շատ ու շատ կետեր ունեւ և ունի հին գրական լեզվի (գրաբարի) հետ։

Այդ ընդհանուր հանգաման կետերը դրսևորվում են գրարարի և արդի հայերենի հոլովման, խոնարհման կամ բառահարաբերական մի շարք տարրերի գործածման, կիրառման ու կատարած ֆունկցիայի միջոցով, հաճախ ձեռք բերելով նորանոր առումներ: Օրինակ՝ դերանվանական հոգերը (-ս, -դ, -ն, նոր՝ -ը), որոնք, ինչպես հայտնի է, ստացվել են անկախ դերանուններից (-ս հոգը՝ ես, սա, այս, -դ՝ դու, դա, այդ, -ն || -ը՝ նա, այն դերանուններից) և գործ են ածվել ու գործ են ածվում հայոց լեզվի պատմության ամբողջ ընթացքում՝ ձևավորվելով հայոց լեզվի նախագրավոր շրջանում: Գրարարում դրանք գործ են ածվել՝ ա) ցուցական իմաստով՝ իբրև այս, այդ, այն դերանունները, հիշյալ դերանունների հետ կամ առանց այդ դերանունների (ինչպես, օր.՝ տեղիս կամ տեղիս այս ժայտ տեղը, տեղիդ կամ տեղիդ այդ ժայտ տեղը, տեղին կամ տեղին այն ժայտ տեղը), բ) ստացական իմաստով (ինչպես և աշխարհաբարում) իմ, քո, իւր, մեր, ձեր, իւրեանց, նորա, նոցա բառերի նշանակությամբ՝ ինչպես հիշյալ դերանունների հետ, այնպես էլ առանց այդ դերանունների (օրինակ՝ եթէ ակն քո չար է, ամենայն մարմինդ խաւարին եղիցի: Ի քում ականո գերան կայ: Ջձեր մոլորութիւնդ սրտի մտօք դարձուցանիցէք ի ճշմարտութիւն երևելի մերոց դիւցազնական օրինացս: Հաւասար իմոց սիրելի նախարարացս: Մոլորեալ էք ի ճշմարիտ օրինացս մերոց: Մերոյ ազգիս: Աշխարհս Հայ ոց: Ոչ ձեր կարգդ անիրաւ է, և ոչ մերս ստութեամբ) և գ) Դիմորոշ իմաստով (ինչպես և՛ աշխարհաբարում)՝ ես, դու, մեք, դուք անձնական դերանունների նշանակությամբ (օր.՝ Մի հեղգասցուք մեզաւորքս ժմենք մեղավորներս, ինչպես նաև կոչականի հետ՝ Սիրեցեալդ իմ: Լուարուք ինձ, զօրքդ ամենեքեան) և այլն:

Այս իմաստով, մանավանդ ստացական իմաստով, այդ նույն հոգերն այս կամ այն տարբերությամբ հանգես են գալիս նաև արդի հայերենում (ինչպես նաև բարբառներում): Գրարարի երրորդ դեմքի -ն հոգի տեղ աշխարհաբարում գործ է ածվում սովորաբար -ը հոգը (նրա ձևափոխությունը): Ի տարբերություն աշխարհաբարի՝ գրարարում որ, որ ինչ, որ ոք, որպես և մի քանի այլ բառերով սկսվող երկրորդական նախադասությունների մեջ որևէ բառի, գլխավորապես բայի վրա է դրվում այդ -ս, -դ, -ն հոգերից մեկն ու մեկը ցուցական կամ դիմորոշ իմաստով, այսպես՝ -ս հոգն իբրև -ես, մեք, սա, սոքա, այս, աստ, այսք, այժմ, այսօր, -դ հոգն իբրև դու, դուք, դա, այդ և այլն (օրինակներ՝ որ գրեցաւն ժայն՝ որ գըրվեցաւ: Ջոր ասացերդ ժայդ՝ որ դու ասացիր: Ջի ասէքդ՝ բարիօք ասէք ժայդ որ ասում եք, լավ էք ասում, ինչպես նաև՝ Ոչ գիտեմ՝ զինչ խօսիսդ: Դիտե՞ք զինչ արարիդ ձեզ: Ես եմ որ խօսիմս ընդ քեզ: Բան զայս կատարեցէք վաղվադակի՝ զոր ասեմքս: Եւ որ սպառնասդ ինձ մահու, ահա խառնես զիս ի գունդն: Քաղցրութեամբ լուիցես՝ զոր ասելոցս եմք: Ոչ՝ որում ցանկացեալդ էք՝ վաղվադակի տամ գտանել ձեզ: Ջոր ասացերն թե... Որոյ սնուցեալ և ուսուցեալն էր, ընդ նոսա եմք եկեալ): Այնուհետև՝ գրարարում, երբ հատուկ անունն առաջից ունի մի ածական կամ գոյական վերագիր, վերջինս ստանում է -ն որոշիչ հոգը (օրինակ՝ Մեծն Ներսէս, արքայն Տրդատ, բայց՝ Ներսէս մեծ, Տրդատ արքայ) և այլն:

Ինչպես հայտնի է, մեր աշխարհաբարի խոնարհման ձևերը (=բայականները) կազմությամբ մասամբ նոր են, մասամբ էլ նույնն են հին (գրա-

քարի) ձևերի հետ, բնականաբար, ձևա-իմաստային որոշ փոփոխություններ, հնչյունափոխություններ կամ հնչյունափոխության հետ միասին նաև իմաստի որոշ՝ երանգավորումով (Մ. Արեղյանի տերմինով ասած՝ եղանակի շրջումով և այլն)¹, Օրինակ՝ աշխարհաբարի անցյալ կատարյալի ձևերը որոշ հնչյունափոխությամբ համարյա թե բոլորովին նույնն են գրաբարի համապատասխան ձևերի հետ. այսպես (վերցնենք զնալ և գրել բայերը):

Աշխարհաբար				Գրաբար			
Եզ.	գնացի	գրեցի		գնացի	գրեցի		
	գնացիր	գրեցիր		գնացեր	գրեցեր		
	գնաց	գրեց		գնաց	գրեաց		
	Հոգն. գնացինք	գրեցինք		գնացաք	գրեցաք		
	գնացիք	գրեցիք		գնացիք	գրեցիք		
				(գնացէք)	(գրեցէք)		
	գնացին	գրեցին		գնացին	գրեցին		

Այստեղ կատարվել է հնչյունական չնչին փոփոխություն. այդ փոփոխությունը կատարվել է գրաբարի ընթացքում հին ձևերի կանոնավորման ու բարելավման հիման վրա.

Ինչ վերաբերում է մեր աշխարհաբարի ըղձակաճ եղանակի ձևերին, ապա դրանք հիմնականում նույնն են հին (գրաբարի) սահմանական եղանակի ներկայի և անցյալ անկատարի ձևերի հետ որոշ հնչյունափոխությամբ և, այսպես ասած, եղանակի շրջումով: Այսպես, օրինակ, գրաբարի սահմանական եղանակի ներկայի ձևերը նույնն են աշխարհաբարի ըղձակաճ եղանակի ներկայի ձևերի հետ, իսկ գրաբարի սահմանական եղանակի անցյալ անկատարի ձևերն էլ նույնն են աշխարհաբարի ըղձակաճ եղանակի անցյալի ձևերի հետ (գարձյալ որոշ հնչյունափոխությամբ և իմաստի դարգացումով):

Այսպես, օրինակ՝

Աշխարհաբարի ըղձակաճ եղանակի ներկա				Գրաբարի սահմանական եղանակի ներկա			
		Անցյալ				Անցյալ	
Եզ.	գնամ	գրեմ	գնայի	գրեի	գնամ	գրեմ	գնայի
	գնաս	գրես	գնայիր	գրեիր	գնաս	գրես	գնայիր
	գնա	գրի	գնար	գրեր	գնայ	գրէ	գնայր
Հոգն.	գնանք	գրենք	գնայինք	գրեինք	գնամք	գրեմք	գնայաք
	գնաք	գրեք	գնայիք	գրեիք	գնայք	գրէք	գնայիք
	գնան	գրեն	գնային	գրեին	գնան	գրեն	գնային

Գրաբարի սահմանական ներկա և անցյալ անկատար ժամանակները (զնամ ժգնում եմ, գրեմ ժգրում եմ և զնայի ժգնում էի, գրեի ժգրում էի) իրենց հիմնական իմաստի հետ միասին արտահայտել են նաև երկրորդական ապառնու իմաստը (ստորադասական կամ ըղձակաճ և ենթադրական եղանակների): Հետագայում հին սահմանական ներկայի և անցյալ անկատարի ձևերի մեջ աստիճանաբար ապառնու և անցյալի իմաստն ուժեղանալով՝ աշխարհաբարում գերիշխող է դառնում այն և սահմանական ներկայի ու անցյալ անկատարի համար առաջ են գալիս նոր ձևեր՝ ներկա

¹ Հմտ. Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, 1931, էջ 309—344:

դերբայի (զնում, գրում) և օժանդակ բայերի (եմ, էի) օգնությունը (օր.[»] զնում եմ, գրում եմ և զնում էի, գրում էի), իսկ հին սահմանական ներկայի և անցյալ անկատարի ձևերը (զնամ, գրեմ և զնայի, գրէի) դառնում են ստորագասական կամ ըղձական եղանակի ներկա-ապառնու հիմնական ձևերը: Այդ բայաձևերին էլ սկզբից ավելանալով կը, պիտի եղանակիչները առաջ են բերում, այսպես կոչված, ապառնի-ենթադրական (կզնամ, կգրեմ) և ապառնի-հարկադրական (պիտի զնամ, պիտի գրեմ) եղանակաձևերը:

Այս նոր որակի տարրերի տեսական կուտակման ու զարգացման շնորհիվ գործածությունից դուրս են ընկնում հին որակի տարրերը՝ նրանց աստիճանաբար մահացման հետևանքով: Բրանք են գրարարի ստորագասական եղանակի ապառնիները՝ ճառաջին ապառնիք (օր.[»] զնայցեմ < *զնա + իցեմ, գրիցեմ < *գրե + իցեմ) և ճերկրորդ ապառնիք (զնացից, գրեցից) կոչվածները, որոնցից առաջինը անկատար, տեսական բնույթ է ունեցել (համապատասխան ներկային և անցյալ անկատարին), իսկ երկրորդը՝ կատարյալ, ոչ տեսական (համապատասխան անցյալ կատարյալին): Բայց նրանց իմաստի տարբերությունը նույնիսկ հնագույն մատենագիրների մոտ արդեն չփոխված է (որը և իր հերթին նպաստում է այդ ձևերի մահացմանը և նոր ձևերի առաջացմանը): Այս երկու ժամանակները մեծ մասամբ նույն նշանակությունն ու գործունեությունն են ունեցել գրարարում, որոնք տեղին նայելով համապատասխան են եղել աշխարհարարի ապառնի ժամանակներից մեկին ու մեկին, ինչպես, օր.[»] զնայցեմ || զնացից = զնալու եմ || զնամ || կզնամ || պիտի գնամ, գրիցեմ || գրեցից = գրելու եմ || գրեմ || կգրեմ || պիտի գրեմ և այլն:

Այսպիսով, ուրեմն, գրարարի ստորագասական եղանակի ապառնու հին ձևերը (զնայցեմ || զնացից, գրիցեմ || գրեցից) աստիճանաբար մահանալով գործածությունից դուրս են գալիս և տեղը գրավում են նոր ձևերը (որոշ հին ձևերի օգտագործումով): Բնչպես հայտնի է, ըղձական եղանակի բայաձևերի սկզբից մեր աշխարհարարում ավելանում են եղանակիչներ (կը, պիտի) և ստանում ենք նոր եղանակներ (ենթադրական և հարկադրական), որ գրարարում չկան: Ուստի կատարվում է նոր որակի տարրերի աստիճանական կուտակման ու ծավալման հիման վրա: Այսպես, օր.

Ենթադրական եղանակ

Ներկա		Անցյալ	
Եզ.	կզնամ	կգրեմ	կզնայի
	կզնաս	կգրես	կզնայիր
	կզնա	կգրի	կզնար
Հոգն.	կզնանք	կգրենք	կզնայինք
	կզնաք	կգրեք	կզնայիք
	կզնան	կգրեն	կզնային

Հարկադրական եղանակ

Ներկա		Անցյալ	
Եզ.	պիտի գնամ	պիտի գրեմ	պիտի գնայի
	պիտի գնաս	պիտի գրես	պիտի գնայիր
			պիտի գրեիր

պիտի գնա	պիտի գրի	պիտի գնար	պիտի գրեր
Հոգն. պիտի գնանք	պիտի գրենք	պիտի գնայինք	պիտի գրեինք
պիտի գնաք	պիտի գրեք	պիտի գնայիք	պիտի գրեիք
պիտի գնան	պիտի գրեն	պիտի գնային	պիտի գրեին

Որ հին սահմանականն անցնում է ըղձականի (ու ստորադասականի) և ենթադրականի (ու ապառնու), ինչպես նաև հարկադրականի տեղը է հայոց լեզվի մեջ երևան է գալիս կը (<կու<կոյ) մասնիկ-եղանակիչը (ինչպես նաև՝ պիտի եղանակիչը), կարելի է դիտել հայոց լեզվի զարգացման տարրեր փուլերում: Կը մասնիկ-եղանակիչը կու կամ կոյ ձևով, որ խոսակցական լեզվում պետք է գործածվեր ավելի շուտ, գրականության մեջ հանդիպում է XII դարից, որ որոշ սահման է դնում հին ու նոր լեզուների մեջ (ինչպես նաև արևելյան ու արևմտյան հայերենների մեջ): Որքան կողմից՝ իր կազմությամբ արդի հայերենի ստորադասական (ըղձական) ներկայի ձևերը գրեթե նույնը լինելով գրարարի սահմանափակ ներկայի ձևերի հետ. օր.¹ (որ) գրեմ, (որ) աշխատեմ, (որ) հավատամ, (որ) իմանամ, և ստորադասական (ըղձական) անցյալի ձևերն էլ՝ գրարարի սահմանական անկատարի ձևերի հետ՝ (որ) գրեի, (որ) աշխատեի, (որ) հավատայի, (որ) իմանայի (միայն, այսպես ասած, եղանակի շրջումով և հընչյունական աննշան փոփոխությամբ), ինքնին հասկանալի է, թե ինչու լեզվի մի որակից մի այլ որակի անցնելը դարերի, նույնիսկ դարաշրջանների պատմութուն ունի, որ այն տեղի է ունենում նոր կառուցվածքի տարրերի աստիճանական ու տեղական կուտակման և հին որակի տարրերի աստիճանական մահացման միջոցով, հատկապես քերականական կառուցվածքի կատարելագործումով, կանոնների ճշգրտումով ու հարստացումով նորանոր կանոններով:

Հին ու նոր հայերենների բնորոշ կողմերից մեկն էլ կրավորական բայերի խոնարհումն է, որ որքան բազմաձև ու խառն է առաջինի մեջ, այնքան միակերպ է վերջինի մեջ: Գրարարի -ալ և -ուլ վերջավորություն ունեցող բայերը, ինչպես հայտնի է, կրավորականի կանոնավոր ժամանակների համար առանձին ձևեր չունեն, այլ կազմվում են անցյալ գերբայով և լինիմ օժանդակ բայով (այսպես, օրինակ՝ աղացեալ լինիլ, ստացեալ լինիլ, բացեալ լինիլ, բողեալ լինիլ, ընկեցեալ լինիլ և այլն): Այս պակասության առաջն առնելու համար հին մատենագիրներից ոմանք կազմում են նոր կրավորական ձևեր (ինչպես, օր.¹ տալ-տուիլ, բանալ-բանիլ, բառալ-բառնիլ, հեղուլ-հեղանիլ և այլն): Իսկ երբ միջին դարերում երևան է գալիս -ու(իլ) մասնիկը (որի հետքը երևում է հին լեզվի -ու(ած) վերջավորություն ունեցող գերբայների մեջ՝ հարուած, ծնացուած, դիպուած, սպառուած և այլն), այնուհետև հեշտ էր ամեն տեսակ բայերի կրավորականը ներգործականից զանազանել. սրանով արդեն լեզվից անհետանում են ոչ միայն նորանոր կրավորականների ձևերը, այլև հասարակ կոչված բայերը, որոնց ներգործական և կրավորական խոնարհումը սկսում է տարբերվել իրարից (օրինակ՝ խոսիլ-խոսուիլ, համարիլ-համարուիլ և այլն)¹, նախքան խոնարհումների կանոնավորումը (պարզացումը): Այժմ բայերը

¹ Հմմտ. Ս. Պալասանյանի, Բնագիտություն տեսություն արևելյան նոր գրավոր լեզվի հայոց, Թիֆլիս, 1870, էջ 83:

խմբավորվում են միայն երկու (-ե) և -ալ) խոնարհումների տակ (գործածությունից դուրս հանելով արդեն -իլ և -ուլ խոնարհումները) և կրավորականը ներգործականից տարբերվում է -վ ձևանիշով (հին՝ -ու)¹:

Հետաքրքրական զարգացում են ապրել հայոց լեզվի հոլովներն ու հոլովումները: Մեր արդի հայերենի հոլովները, համեմատելով հնի հետ, շատ ավելի պարզ են ու ձևերն էլ տարբեր հնից (մասամբ էլ արևմտյան հայերենից): Այդ տարբերությունը երևում է մանավանդ ներգոյական, բացառական հոլովական վերջավորությունների և հոգնակերտ մասնիկների մեջ:

Այսպես, օրինակ, -ում վերջավորությունը (որի հնչյունափոխված ձևերն են հավանաբար -ըմ՝ չարարադի բարրառում և -ամ՝ Ագուլիսի բարրառում, օր. մարիլմը, մորիլամ, մարիլամ), անշուշտ, գալիս է ավելի վաղ ժամանակներից և գրաբարում, հավանաբար, գործ էածվել, որպես տրականի հոլովանիշ՝ ա) ղերանուններում (ու՞մ, որում, քում, մերում, սորայում, և սգված՝ սմա, դմա, նմա, ալյւմ, նմին և այլն), բ) բովականներում (միում, առաջնում, երկրորդում և այլն) և գ) մի քանի գոյական և ածական անուններում (զլիսում, սրում, մարմնում, հնում, վերնում) և այլն: Եվ քանի որ հին հայերենը, գոնե մեզ ծանոթ գրաբարը, ներգոյականի համար առանձին ձև չունի, այլ տրականից է կազմվում ի (կամ՝ յ) նախդիրով, այս կարգի բառեր -ում վերջավորությունը պահել են ներգոյականում՝ ի միում, յառաջնում, ի զլիսում և այլն: Ըստ երևույթին, այս միևնույն -ում ձևն է, որ պահպանվել է մեր արդի հայերենում ներգոյական կազմելու համար՝ զլիսում, քաղաքում, մարմնում, հնում և այլն (արևմտյան բարբառները ներգոյականի համար առանձին ձև չունեն և սովորաբար կազմվում են սեռական հոլովից մեջ հետադրություն՝ զլիսու մեջ, քաղաքի մեջ, մարիու մեջ)²:

Մեր արդի գրական հայերենում գործածական չեն հոլովական որոշ հին վերջավորություններ, ինչպիսիք են՝ բաց. -է, գործ. -աւ, -իւ և այլն, և զարգացել են նորերը՝ բաց. -ից, ներգ. -ում, իսկ գործիական հոլովի համար գերազանցապես ընդհանուր է դարձել -ուլ վերջավորությունը և այլն: Հոլովումների տեսակետից էլ հին ու նոր լեզուների մեջ շատ մեծ տարբերություն կա. առաջինը հայտնի է իր բազմաթիվ ու բազմաձև հոլովումներով. երկրորդը՝ իր պարզությունով ու միօրինակությամբ: Այս պարզության կամ միօրինակության պրոցեսը միամասնակ, որ կատարվում է լեզվի զարգացման ներքին օրենքների հիման վրա, սկիզբ է դնում իր հերթին հին ու նոր լեզուների տարբերակման, և դա ի վերջո հասնում է այն բանին, որ բոլոր բառերի հոլովումը վեր է ածվում երկուսի, այսինքն՝ սեռ. -ի և -ու, բաց. -ից և -ուց և գործ. -ուլ: Մյուս -ան, -ոջ, -որ հոլովումները շատ քիչ բառերի վրա են տարածվում, իսկ -յան, -յամբ ձևերը նոր գրական լեզուն վերցրել է հնից: Այսպիսով, մեր արդի գրական հայերենի անուններում (չհաշված դերանունները) գերակշռում է ի հոլովումը (մանավանդ հոգնակիում):

¹ Երբեմն այս վ ձևանիշն ունեցող որոշ բայեր ոչ թե կրավորական, այլ չեզոք սեռի իմաստով են գործածվում, ինչպես օր. հարձակվել, պապանձվել, համաձայնվել, բնակվել, հաշտվել, հրաժարվել, հնազանդվել և այլն: Ուրեմն, քերականական ձևի հետ միասին խիստ անհրաժեշտ է նաև իմաստը հաշվի առնել:

² Հմմտ. Ս. Պալուստյան, *Հնդհանուր տեսություն արևելյան նոր գրավոր լեզվի հայոց*, Թիֆլիս, 1870, էջ 23:

Այնուհետև՝ մեր արդի հայերենի -եր, -ներ հոգնակի մասնիկները բավական հնուժյուզ ունեն, որոնք հանդես էին գալիս, այս կամ այն չափով, ուրիշ հոգնակի մասնիկների, մանավանդ գրարարի սովորական -ք հոգնակի մասնիկի կողքին, որոշ բառաձևերում. այսպես՝ նաւկնեար «նավակներ», բարձկնեար «բարձիկներ» (զբարձկնեարդ, ի վերա բարձկնեարոյ), քաղաքկնեար (ի քաղաքկնեարդ), վանեար (վաներով)։ Ղ. Փարպեցին երկրարարող պարպացնելով է գործածում, օր.՝ զհարկեր, գրաներ, զձեռներն, զհարկերն։ Միջին դարերում, մանավանդ XII դարից հետո այս ձևերն ավելի սովորական դարձան, մինչև որ, վերջապես, ընդհանրացան ու միօրինականացան մեր արդի հայերենում։

Լեզվի ներքին զարգացման հետևանքով գրարարի հայցական հոգնակին, որպես ուղիղ խնդրի կամ տեղի պարագայի հատուկ ձև, հետագայում դառնում է եզակի ուղղական, ինչպես՝ կարս, Բոլնիս, Ագուլիս, նաև՝ ծախս, բաղնիս, փուքս և այլն (որովհետև նման հայցականի ձևեր աշխարհարարում չկան)։ Այսպես նաև՝ հին ուղղական հոգնակի ձեռք, ոտք, աչք և նման շատ բառերն այժմ եզակի են գործածվում, քանի որ գրարարի -ք հոգնակերտ մասնիկը հին հոգնակերտական իմաստից անցել է բառաստեղծական իմաստին (որի տեղ այժմ մեր գրական հայերենում ընդհանրացել են -եր և -ներ մասնիկները)¹։

Գրարարյան և այժմյան պես, բար(ք), օրեն(ք) սպասարկու բառերը վեր են ածվել սովորարար բառ-մասնիկների, այսպես՝ ընդհանրապես, գազանաբար, գազանորեն, անմտորեն և այլն։ Նման դեպքերում հնչյունական փոփոխությունը (-որեն < օրէնք) ավելի է նպաստում բարդության օժանդակ անդամի կտրվելուն իր նախկին բառային փոճակից և մասնիկի է վերածվում, երբ նա հիմնական և կոնկրետ իմաստ այլևս չունի, այլ ստանում է ավելի վերացական և ընդհանուր գաղափար, և յստանձին վերցրած այդ փոփոխված մասնիկը այլևս չի զուգորդվում այն բառի հետ, որից նա ծագել է և հետևապես առանձին գոյություն ունենալ, իրրև անկախ բառ, նա չի կարող։ Մա կատարվում է դարերի ընթացքում։ Այս ձևով են ստացվել մի շարք բառարմատներից բառ-մասնիկներ, ինչպես, օրինակ, հին

¹ Մի ժամանակ կար երկակի թիվ, եռակի թիվ, որ Աֆրիկայի և Ամերիկայի բնիկները դեռ այդ պահում են։ Հնդեւրոպական շատ լեզուներ (հունարեն, սլավոներեն) երկար ժամանակ պահում էին երկակի թիվ, բայց որոշ ժամանակից հետո այդ վերանում է, որպես հին լեզվական երևույթ։ Մեր հայոց բարբառներն էլ հավանաբար տեղ-տեղ գործ են ածել, ինչպես՝ աշվի, ոտվի, ձեռվի, ընքվի, գովի և այլն -վի մասնիկով)։ Հայերենը վաղուց այդ կորցրել է։ Օրինակ գրարարու բացի հիմնական հոգնակի կազմող -ք մասնիկից, գործ է ածել նաև ուրիշ շատ երկրորդական (ավելի քիչ գործածվող) հոգնակի մասնիկներ, ինչպես, օրինակ, -այլ, -ան, -եան, -անի, -եաք (նոր՝ -եր), -նեաք (նոր՝ -սեր), -որայ, -որեայ, -ոսի, -սի, ինչպես նա (միջին հայերենում)՝ -նի, -ուի, -սան, -եք և այլն (բարբառներում նաև սրանց բազմաթիվ ու բազմապիսի բաղադրուկներ)։ Հիշյալ մասնիկներից արդի գրական հայերենում պահպանվել են հիմնականում -եր (հին՝ -եար) և -ներ (հին՝ -նեար) հոգնակիները, իսկ մյուսները հոգնակերտական գաղափարից անցել են բառաստեղծական կամ բառակազմական գաղափարին, այսօր գործածվելով որպես բառակազմական մասնիկներ, ինչպես, օրինակ, տեղիք, արժանիք, զործիք... տակաւն, փոքաւն, ... գլխաւն, ոտաւն... և այլն։ Այս մասին տես իմ ուսումնասիրությունը՝ «Հայերենի մասնիկները և նրանց առնչությունները վրաց և կովկասյան մյուս լեզուների հետ» (Հայկական ՍՍԽ ԳԱ Լեզվի ինստիտուտի աշխատություններ, հատ. IV, 1949, էջ 113—174, նաև հետագա էջերը)։

առնել ժանել՝ բայի արար (կրկնված) արմատից՝ շինարար, ազդարար, գործարար, փրկարար... հին հարկանել ճարվածել՝ բայի հար արմատից՝ փողահար, սրնգահար, նետահար, վշտահար, դաշնակահար... վարել բայի վար (|| վարի) արմատից՝ քաղաքավարի, գյուղավարի, տնավարի, մեծավարի, բնկերավարի... արածել ճովվել՝ բայի արած արմատից՝ գառնարած, հորթարած, եղնարած, այլև՝ տավարած (ար մասի կրճատումով) և այլն:

Նման պրոցես է ապրել նաև կալնել ճրոնել՝ բայի կալ արմատը, որ իր իմաստափոխություն շնորհիվ, նախ, օժանդակ և, ապա, ձևական դեր է սկսում խաղալ մի շարք բայերի մեջ, ինչպես, օր.՝ ճարպակալել, ստոցակալել, թեփակալել, թարախակալել, ջրակալել, մամռակալել, մազակալել, ինչպես նաև հին արկանել ճցցել՝ բայի արկ արմատից՝ ձեռնարկել, գործարկել, թվարկել, աղնարկել, թողարկել և այլն: Այս ձևով նաև -տտ մասնիկը, որ ստացվել է հատանել ճկտրել՝ բայի արմատից (հնչյունափոխություն), օր.՝ գլուխ ձառնել > գլուխ հատել > գլխատել (ուր հ հնչյունն ընկել է, համտ. զատել < *զհատել, զով < *զհով և այլն): այսպես նաև՝ ծայրատել, քարատել ճքարը տաշել, խրամատել, այլև՝ պոչատ (< պոչահատ), ձեռնատ կամ կոնատ, հերատ, աղանջատ, փայտատ, միջատ, կիսատ, և այլն:

Այժմ մեզ համար մեռած -ան մասնիկը մի ժամանակ տվել է գրարարում գործողության տեական և անկատար սահմանագծումը ի հակադրություն անցյալ կատարյալի բնի որոշյալ և կատարված առումին, ինչպես տեսանեմ-տեսի, ելանեմ-ելի, իջանեմ-իջի, գտանեմ-գտի, մտանեմ-մտի, լուծանեմ-լուծի, անիծանեմ-անիծի, թքանեմ-թքի և այլն (անցյալ կատարյալի ձևերից -ան մասնիկը դուրս է բնկնում): Այս -ան մասնիկը աշխարհարարում, ինչպես հայտնի է, կամ հնչյունափոխվում է (-ան > -ն ձևով) և քարացած ձևով է հանդես գալիս, կամ էլ բոլորովին դուրս է ընկնում, ինչպես, օրինակ՝ տեսանեմ > տեսնեմ, ելանեմ > ելնեմ, իջանեմ > իջնեմ, գտանեմ > գտնեմ, մտանեմ > մտնեմ... լուծանեմ > լուծնեմ, անիծանեմ > անիծնեմ, թքանեմ > թքնեմ և այլն: Հետաքրքրական է, որ նույն գրարարում գործողության տեականության որոշ երանգավորումով գոյություն ունեին կրկնաձև բայեր՝ ինչպես -ան մասնիկով, այնպես էլ առանց այդ մասնիկի (աշխարհարարում սովորաբար այդ -ան մասնիկը դուրս է ընկած, իսկ եղած դեպքում էլ՝ քարացած ձևով է պահպանված): այսպես, օրինակ, ցանկամ || ցանկանամ, զղջամ || զղջանամ, մուրամ || մուրանամ, սողամ || սողանամ, տենչամ || տենչանամ... բեկեմ || բեկանեմ, տարածեմ || տարածանեմ, ներկեմ || ներկանեմ, գանգեմ || գանգանեմ, գատեմ || գատանեմ, լքեմ || լքանեմ, հերձեմ || հերձանեմ (նաև՝ հերձում), դիզեմ || դիզանեմ (նաև՝ դիզում), կիզեմ || կիզանեմ (նաև՝ կիզում), ստեղծեմ || ստեղծանեմ (նաև՝ ստեղծում), թքեմ || թքանեմ (նաև՝ թքում), եղծեմ || եղծանեմ (նաև՝ եղծում), հերձիմ || հերձանիմ (նաև՝ հերձում) և այլն:

Աշխարհարարի պատճառական բայերը ծագում են գրարարի պատճառական ձևերից որոշ հնչյունափոխությամբ (պատճառականի -ուցան ածանցի ու և ա ձայնավորների սղումով), օրինակ՝ թոռացանել > թոցնել, հասուցանել > հասցնել, դարմացուցանել > *դարմացնել > դարմացնել, բնակեցուցանել > *բնակեցցնել > բնակեցնել, դարձուցանել > *դարձցնել > դարձնել և այլն:

Հնչյունափոխությունը, որ բառի մեջ կատարվում է կամ որոշ հըն-

չյուլներին անհետացումով, կամ նորերի ավելացումով, կամ դրանց որակական փոփոխություններով (ինչպես նաև դասավորման՝ տեղի փոփոխությամբ), հանդես է գալիս լեզվի զարգացման բոլոր փուլերում և ոչ սակավ դեպքերում բառի մեջ առաջ է բերում նաև այս կամ այն չափով իմաստային փոփոխություններ կամ երանգավորումներ: Այդ նկատելի է մանավանդ գրական հայերենի և բարբառների միջև, ինչպես, օրինակ, եղբայր ($\parallel$ *աղբայր) և ախպեր ($\triangleright$ ապեր), ընտրել և հնդրել ($\angle$ *հընտրել), հատել և զատել (*զհատել, որից և՛ գատ), սալոր և շլոր, աչք և աշել ($\angle$ *աշել), ձգել և գցել ($\angle$ *գձել), ճանաչ ($\angle$ *ծանաչ) և ծանոթ ($\angle$ *ծանօթ $\angle$ *ծանաթ), աղաչ և աղոթ ($\angle$ աղօթ $\angle$ աղաւթ), սեպուհ և սեփական ($\angle$ սեպուհ-ական), քորել և ծորել և այլն:

Իմաստի փոփոխությունը կատարվում է նաև առանց ձևերի փոփոխության: Նախ՝ մի կողմից այդ ձևերը դեռևս կենդանի լինելով՝ ձեռք են բերում նոր իմաստ ու կատարում նոր ֆունկցիա, օրինակ, երբ ասում ենք զյուղացիք, հասկանում ենք «գյուղացիներ», ուր -ք մասնիկը հոգնակի ուղղականի դեր է կատարում (այսպես նաև՝ *ուտեմ—*ուտեմք $\triangleright$ ուտենք), իսկ հումք, տեսք, շարժք, հայրենիք, խնդիրք, տարիք, տեղիք, խաղք, հետք, բարիք, լայնք և այլն՝ հոգնակի ուղղականի ձևեր չենք հասկանում. նման ձևերի մեջ -ք մասնիկը բառաստեղծական նոր պաշտոն է կատարում՝ բառի նախնական հոգնակի գաղափարը մեր ածելով բառի հավաքական և ընդհանուր (վերացական)՝ եղակի գաղափարին (մի հումք կամ տարիք պիտի նշանակեն ճիշմերը կամ «տարիները», որոնք փոխանցվել են նոր որակի)՝ Այնուհետև՝ մյուս կողմից՝ այդ ձևերը բառերի մեջ պահպանված լինելով քարացած ձևով նոր պաշտոն են կատարում՝ նկատի առնելով այն բառիմաստային փոփոխությունները մասնիկներով, երբ, օրինակ, հոլովաձևերով անունները դառնում են մակրայ կամ շաղկապ, ինչպես գրաբարից աշխարհարար՝ իզուր (ի զուր), իսպառ, իսկույն ($\angle$ իսկոյն՝ սեռ. հոլ.), վաղուց (սեռ. հ.), իհարկե ($\angle$ ի հարկէ՝ բաց. հոլ.), իծնե, բնավ ($\angle$ բնա՝ գործ. հ.), սակավ, իրավ, իրոք ($\angle$ իրօք $\angle$ իրաւք՝ գործ. հ.), արդյոք ($\angle$ արդեօք), իատիվ ($\angle$ իստիւ), հազիվ, ինչպես նաև՝ վերև, ներքև, միջև, առջև, ամոթու (հին ամօթոյ ձևից), ահու, ծիծաղու, կեցցե, հասցե և այլն:

Մեր արդի գրական հայերենի հոլովման և խոնարհման պործոն (կենդանի) ձևերի կողքին, որ արդյունք են նոր կառուցվածքի տարրերի աստիճանական ու տևական կուտակման ու զարգացման, կան նաև հին (մեռած) ձևեր, որոնք այսօր հանդես են գալիս ոչ թե քերականական, այլ միայն բառական արժեքով, բոլորովին այլ իմաստով ու դերով: Դրանք հայոց լեզվի բառային կազմի հարստացման, այսպես ասած, յուրահատուկ

¹ Գրաբարը բացի սովորական -ի հոգնակերտ մասնիկից, ունեցել է նաև -անի և -սի հավաքական հոգնակները, ինչպես՝ կանանի, աւագանի, աղատանի... մանկսի, ծակսի, ոսկրոսի... որոնք (այլ հոգնակի մասնիկների հետ բարգված) որոշ հնչյունափոխությամբ պատահում են հայոց բարբառներում, իսկ գրական նոր հայերենում սրանք ևս հանդես են գալիս սովորաբար բառաստեղծական իմաստով: (Այս և մյուս հոգնակի մասնիկների երկակի բնույթի մասին, հոգնակերտական գաղափարից բառաստեղծական-բառակազմական գաղափարի անդամները մանրամասն տես իմ «Հայերենի մասնիկները...», Հայկական ՍՍԻ ԳԱ լեզվի ինստիտուտի աշխատություններ, հատ. IV, 1949, էջ 157—174):

միջոցներ են, որոնք հանդես են գալիս որպես բառական արժեք ներկայացնող առանձին միավորներ, նրանց հոլովական և խոնարհման հին հասկացություններն արդեն միագնաժ ու քարացած լինելով՝ շնորհիվ հին որակի տարրերի աստիճանական մահացման: Դրանք են՝ ա) հիմ հոլովաձևեր (ինարկե, հարկավ, իրավ, իրավամբ, խելոք, կանխավ, լրիվ, բարև, հետև, այնուհետև, որովհետև, մասին, սակավ, վերև) և բ) հիմ խոնարհման ձևեր (կեցցե, հասցե, գուցե, դիցուք, համարյա, գրեթե, բամբասանք, ասեկոսե, երբեիցե || երբեք, ինչեիցե || ինչեք, որեիցե || որեք) և այլն:

Բացի սրանից՝ գործածությունից դուրս են եկել կամ քարացած ձևերով պահպանված են այսօր գրարարյան նախդիրները զ, ի (յ), գ, առ ընդ, ուստ, որոնք գրարարում գրվում էին զանազան հոլովների հետ՝ փոխելով նրանց նշանակությունը կամ ավելի պարզելով այն նշանակությունը, որ հոլովներն առանց նախդրի էլ ունեին: Այդ պատճառով էլ աշխարհարարում շատ անգամ գործ են ածվում նույն հոլովներն առանց նախդրի (օրինակ՝ գնաց ի տուն = գնաց տուն. Հարկանել զքարի = քարի խփել. ծափ զծափի հարկանեմ = ծափ ծափի տամ: Իոհ եմ զքեզ = գոհ եմ քեզից և այլն):

Հայոց լեզվի բառային կազմը որոշ չափով հարստացրել են նաև զբարարյան այն նախդիրները, որոնք գործածվելով այլևայլ հոլովների հետ և տալով նրանց զանազան նշանակություններ ու առումներ՝ այսօր քարացած են և հանդես են գալիս որպես առանձին բառական արժեքներ (բառաձևեր)՝ ձևի և իմաստի տեսակետից որոշ փոփոխություններ կրած լինելով: Երանցից են՝ ա) առ- նախդիրը (առայժմ, առանցք, առաջ, առարկա, առավել, առերևույթ, առկայծել, առհասարակ, առողջ, առօրյա..., բ) գ- (>ս-) նախդիրը՝ զանցանք, զատել, զարկել || զարնել, զարկ, զով, զարդ, զարթոն, զիջել, զերծ, սթափել, սքողել, սփռվել... գ) ընդ- (>ըն- || ըմ-) նախդիրը՝ ընդառաջել, ընդարձակ, ընդգրկել, ընդդեմ, ընդդիմախոսել, ընդհատել, ընդմիջել, ընդունել, ընդունակ, ընդհանուր, ընձեռել, ընձյուղ, ըմբռնել..., դ) ըստ- (>ստ-) նախդիրը՝ ստանձնել..., ե) ի (>ի >հ) նախդիրը՝ իբրև, իգուր, իսպառ, խառնիխուռն, հարձակվել, հավելված հօրինել..., զ) ց- նախդիրը՝ ցայգ, ցանկ, ցերեկ, ցմահ, ցերեկույթ, ցարգ... և այլն:

Դրարարում հոլովվել են ոչ միայն գոյական անունները (ինչպես և՛ դերանունները), այլև գոյականների պես հոլովվել են ածականները, որոնք գրված լինելով գոյական անունների վրա՝ նրանց հետ սովորաբար համաձայնել են թվով ու հոլովով: Դրանք մեծ մասամբ հետագաս ածականներն են, երբեմն էլ նախադասները, ինչպես, օրինակ՝ հետադաս՝ Արջ օրհասականք. Արք պարսիկք. Ջարդք պայծառք, զարդս պայծառս. Աւանք ցանկալիք, աւանաց ցանկալեաց. Ակամբք պատուականօք. Տերանց ձերոց մարմնաւորաց. Բանիւք սպառնալիօք. Ընդ օրինօք քովք. Առն իմաստնոյ. Ժամանակս բազումս. Բոլորով սրտիւ իմով... Նախադաս՝ Այսպիսեաց իրաց. Ի ձեռն պատուաւորի զօրագլխի ուրուք. Մերոյ ազգիս. Այսու բարեմտութեամբ. Ընդ նովին օրինօք. Ջշորս զինուորսն, շորից զինուորացն. Հինգ այր, հնգի առն, հնգից արանց. Ջերկուս աւուրս, երկուց աւուրց. Նորոյ ուխտի. Մեծաւ քինու... և այլն: Սակայն կան դեպքեր, երբ ածականները թվով և հոլովով չեն համաձայնել (մեծ մասամբ նախադաս ածականները),

ինչպես, օրինակ, Առաքեաց առ նա րագում գանձիք. Ոչինչ կարօտին նոքա մարմնաւոր մեծութեան. Երկու աւուրիք. Տասն կուսանաց. Յարքունի աանէ. Գեղեցիկ վիմօք... Հրամանաւ արքունի. Արք հինգ, զարս հինգ, Հարքն մեր... և այլն:

Այսպիսով, ուրեմն, գրաբարում սովորաբար ածականը թվով ու հոլովով համաձայնել է գոյականի հետ: Մա գրաբարի տարրերակիչ հատկանիշներին է, որ աշխարհաբարում չկա. այդ համաձայնությունը ոչ մի հետք չի թողել աշխարհաբարում (եթե հաշվի չառնենք շարագասական մի քանի աննշան դեպքեր, օր.՝ մայր իմ անուշ = իմ անուշ մայր, կարգն աշխարհի և այլն):


Ծիշտ է, ենթակայի և բայի համաձայնությունը նույն կերպ է լինում, ինչպես ե աշխարհաբարում, բայց շարագասության տեսակետից գրաբարում բայը (գիմավոր թե անցյալ դերբայ) սովորաբար գրվում է ենթակայից առաջ, շատ անգամ նույնիսկ նախագասության սկզբում, մինչդեռ աշխարհաբարում, ընդհակառակը, բայը սովորաբար ընկնում է ենթակայից հետո, հաճախ նույնիսկ նախագասության վերջում: [Մի քանի օրինակներ գրաբարից՝ Պատասխանի ետ Պարթևն Վարթևը պատասխան տվեց: Ապա տայր հրաման Շապուհ արքայ Պարսից Վեհոտ պարսից Շապուհ արքան հրաման տվեց. Լուաւ դայս ամենայն թագաւորն թագաւորն այս բոլորը լսեց և այլն]:

Աշխարհաբարում որոշիչը սովորաբար գրվում է որոշյալից առաջ, իսկ գրաբարում գրվում է թե առաջ և թե հետո, օրինակ՝ Եւս ալլա կամ ալլա Եւս: Հատկացուցիչն աշխարհաբարում սովորաբար հատկացյալից առաջ է գրվում, իսկ գրաբարում՝ հատկացյալից հետո (բայց կարող է և՛ առաջ գրվել), օր.՝ Յաշխարհս Հայոց (նաև՝ ի Հայոց աշխարհս). Սկիզբն չարեաց (նաև՝ չարեաց սկիզբն): Աշխարհաբարում խնդրառուն գրվում է կողմնակի խնդիրներից հետո, ինչպես Հոռմայեցոյ դորքի վրա Տիգրանի հարձակվելու մասին. Ջեզնից մեկը և այլն, իսկ գրաբարում, ընդհակառակը, խնդրառուն գրվում է կողմնակի խնդիրներից առաջ, ինչպես, օրինակ, Յաղագս յարձակելոյ Տիգրանայ ի վերա զօրացն Հոռմայեցւոց. Դիմումն ի մեզ Պոմպէի. Մի ոմն ի ձէնջ. խաղալն Արտաշեսի յարեմուտս և ձերբակալ առնել զԿրասոս. Ջայնու ժամանակաւ ապստամբեաց յարքայէն Հայոց ի ծառայից նորա, և այլն, և այլն:

Դժվար է այս փոքրիկ հոգվածում բոլոր տեսակի փաստերը բերել հայոց լեզվի քերականական կառուցվածքի փոփոխությունների, նրա բարելավման ու կատարելագործման մասին, որ տեղի է ունեցել դարերի ընթացքում՝ նոր որակի տարրերի աստիճանական կուտակման ու ծավալման և հին որակի տարրերի աստիճանական մահացման միջոցով: Այսպիսով, հայոց լեզուն, ինչպես հայտնի է, գրավոր շրջանից սկսած՝ անցել է իր զարգացման տարրեր փուլերը, որոնք հայ քերականների ուսումնասիրությունների համաձայն լինում են հին, միջին և նոր: X—XII դարերից արդեն հայոց հին գրավոր լեզուն (գրաբարը լիովին հասկանալի չէր հայ ժողովրդին, հայոց միջին գրավոր լեզուն էլ XVII—XVIII դարերից հասկանալի չէր հայ ժողովրդին, թեև լեզվական շատ տարրեր ընդհանուր են գրաբարի, միջին հայերենի և արդի հայերենի (ինչպես նաև հայոց բարբառներին) միջև, իսկ լեզվական շատ տարրերով տարբերվում են՝ գրաբարը

միջին հայերենից և միջին հայերենը՝ արդի հայերենից կամ աշխարհարարից՝ լեզվի զարգացման ու կատարելագործման ներքին օրենքների շնորհիվ: Այդ օրենքները, որոնք ստեղծվել են մարդկանց կամքից անկախ լեզվի պատմության ընթացքում, լեզվի մեջ գործում են յուրահատուկ ձևերով, ավել կամ պակաս չափով արտահայտվելով նրա զարգացման տարրեր փոփոխում, ընդ որում նոր որակի տարրերի աստիճանական ծավալման ու կուտակման միջոցով առաջ են գալիս լեզվի որակային փոփոխություններ ու անցումներ: Որակական այդ փոփոխությունների ու անցումների շնորհիվ գրարարի, միջին հայերենի և արդի հայերենի (աշխարհարարի) քերականական կառուցվածքները ռազմաթիվ ընդհանրությունների կողքին ձեռք են բերել նաև ավելի շատ տարբերություններ ու յուրահատուկություններ, նոր օրենքների ու օրինաչափությունների համաձայն, որոնցով սահմանազատված են նրանք իրարից: Այդ տարբերությունները դեռևս անցյալ դարից դիտել և ընդգծել են հայ նշանավոր քերականները՝ Ա. Այտրնյանը, Ստ. Պալասանյանը, Մ. Արեղյանը և այլն, ինչպես նաև հայ մեծ լուսավորիչ Խ. Արսլյանը և ուսուցիչ-դասերգետներ Մ. Նալբանդյանը, Օրենքներն ու օրինաչափությունները ստեղծվելով մարդկանց կամքից անկախ նաև լեզվի պատմության ընթացքում միայն հայտնաբերվում ու ճանաչվում են մարդկանց կողմից: Ի. Վ. Ստալինի այն դրույթը, թե գիտության օրենքները մարդկանց կամքից ու գիտությունից դուրս օբյեկտիվ երևույթների ու օրինաչափությունների սրտացույց են, թե մարդիկ նոր օրենքներ ստեղծել, կամ չին օրենքները ոչնչացնել չեն կարող¹, — հավասարապես վերաբերում է նաև լեզվաբանությանը:

Մենք աշխատեցինք մեր այս հոդվածում, հնարավորին չափ, մի շարք փաստերի հիման վրա, հիմնական գծերով, ցույց տալ հայոց լեզվի քերականական կառուցվածքի փոփոխությունները, նրա տարբերությունները հնից, նրա զիմացկունությունը դարերի ու դարաշրջանների ընթացքում:



¹ Ի. Վ. Ստալին, Սոցիալիզմի տնտեսական սլոգանները ՍՍՌՄ-ում, Երևան, 1952, էջ 4.